ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ /Լ. Հովհաննիսյան/

«31» 08 օգոստոս 2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«2023-2024» *ՈՒՍՏԱՐԻ*

«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆԻ Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Կյուրեղյան Քրիստինե Պլատոնի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

IX Գ

դասարան

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2023-2024 ուստարում 9 գ դասարանը կոմպլեկատավորվել է 27 աշակերտներով: Նրանցից 11-ը տղաներ են, 16-ը՝ աղջիկներ:
Դասարանում տիրում է առողջ ու ջերմ մթնոլորտ: Աշակերտները կազմակերպված են, միշտ պատրաստ դասերին, ակտիվ են և աշխույժ:
Ընկերասեր են, պատրաստակամ են միմյանց օգնելու և աջակցելու: Դպրոց հաճախում են մեծ սիրով:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

ա/ Սովորողը պետք է իմանա իր իրավունքներն ու պարտականությունները: Նրանց մեջ պետք է ձևավորվի պարտաճանաչություն և պատասխանատվություն սեփական գործի նկատմամբ:

բ/ Ուշադրությունը կենտրոնացնել առաջադիմության բարձրացմանը:

գ/Ձևավորել ընկերական փոխօգնության մթնոլորտ, հետաքրքրություն և ուշադրություն համադասարանցիների նկատմամբ:

դ/ Աշակերտների մեջ սերմանել սիրո, համերաշխության, հանդուրժողականության սերմեր:

3. Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն

Աշակերտը պետք է գիտակցի, որ ինքը քրիստոնյա է, ծանոթ լինի քրիստոնեական արժեքներին, մարդասիրական գաղափարներին, ճանաչի աղանդները և հեռու լինի դրանցից:

Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտը պետք է կարողանա շրջապատում տեսնել գեղեցիկը, ընկալի և գնահատի այն: Գեղագիտական ճաշակ ձևավորելու նպատակով կազմակերպել ճիշտ աշխատանքը՝ այցելություններ թանգարաններ, թատրոն, կազմակերպել դասղեկի ժամեր մշակութային թեմաներով:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ձևավորել սեր, պարտքի և պատասխանատվության զգացում հայրենիքի նկատմամբ: Կազմակերպել և անցկացնել դասղեկի ժամեր ռազմահայրենասիրական թեմաներով, գիտել հայրենիքի, պատմության, հիշարժան դեպքերի, հերոսների մասին գիտելիքներով:Սեր և հարգանք սերմանել պետականության, պետական խորհրդանիշների հանդեպ:

Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակության նպատակը աշակերտի ֆիզիկական առողջության պահպանումն է: Անհրաժեշտ է հոգ տանել, որ ստեղծվեն պայմաններ ֆիզիկական զարգացման համար: Հետևողական լինել աշակերտի մասնակցությանը ֆիզկուլտուրայի դասերին, խրախուսել նրանց մասնակցությունը դպրոցում և քաղաքում կազմակերպվող սպորտային միջոցառումներին:

Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտը պետք է գիտակցի , որ բարեկեցիկ , առողջ կյանքով ապրելու, հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ է աշխատել, հարգել աշխատանքը:

Բնապահպանական դաստիարակություն

Հաշվի առնելով արդի էկոլոգիական հիմնախնդիրները՝ բնապահպանական դաստիարակության հիմքում դնել բնության նկատմամբ սերը և հարգանքը՝ զինելով աշակերտին համապատասխան գիտելիքներով: Հոգատար ու սրտացավ վերաբերմունք ձևավորել մեզ շրջապատող բնության նկատմամբ, կարևորել շրջակա միջավայրի մաքրությունը:

Դպրոց-ընտանիք կապը

Ընտանիքները միանման չեն: Ապահովելով ծնողների կապը դպրոցի հետ՝ դասղեկի աշխատանքը դառնում է ավելի արդյունավետ: Պետք է պարբերաբար անցկացնել ծնողական ժողովներ, ամրապնդել ծնող-աշակերտ-դպրոց-ուսուցիչ փոխհարաբերությունները:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

I կիսամյակ

Ուա/շ	*Ուս. աշխատանքի բովանդակությունը*	*Կատարման ժամկետը*	Դասղեկ
I	« Գիտելիքը ընտիր ոսկուց առավել է»	1.09.2023	Դասղեկ
II	Ընդհանուր կազմակերպչական հարցեր	8.09.2023	Դասղեկ
III	« Անկախությունը բացարձակ արժեք է»	15.09.2023	Դասղեկ
IV	« Մերօրյա հերոսները»	22.09.2023	Դասղեկ
V	« Կարծիքներ և նախապաշարմունքներ»	29.09.2023	Դասղեկ
VI	«Ուրիշներին ընկալելը»	6.10.2023	Դասղեկ
VII	« Ինչ է կարծրատիպը»	13.10.2023	Դասղեկ
VIII	« Կարծրատիպերի առաջացման պատճառները»	20.10.2023	Դասղեկ
IX	«Իմ երկրի պատմության հերոսական էջերը»	27.10.2023	Դասղեկ
X	« Պատերազմով խաթարված պատանեկություն»	10.11.2023	Դասղեկ
XI	«Նրա մասին , ով ամեն օր իմ կողքին է»	17.10.2023	Դասղեկ
XII	« Աշխատանքը ազնվացնում է մարդուն»	24.11.2023	Դասղեկ
XIII	«Լավ մարդիկ ավելի շատ են»	1.12.2023	Դասղեկ
XIV	«Վատ սովորության հետևանքները»	15.12.2023	Դասղեկ
XV	«Հայկական ավանդույթները, որոնցով հպարտանում եմ»	22.12.2023	Դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ	
Շաբաթվա օրը	*դասաժամը*
Ուրբաթ	3-րդ ժամ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	*դասաժամը*
Ուրբաթ	3-րդ ժամ

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման օրը	*Քննարկվող հարցերը*	*Համառոտ բովանդակությունը*
Սեպտեմբեր	1. Ծնողկոմիտեի կազմի ընտրություններ 2 .Սոցիալապես անապահով ընտանիքներ 3 .Կազմակերպչական հարցեր	
Դեկտեմբեր	1.Կազմակերպչական հարցեր	

Հունվար	1.Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում 2. Կազմակերպչական հարցեր	
Մայիս	Կազմակերպչական հարցեր	

Դասղեկ՝ Ք. Կյուրեղյան